ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ապրիլի 2018 թվականի N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 53-ում «Հովսեփյան Ադելա» բառերը փոխարինել «Թովմասյան Գյուլնազ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի Հարժիսի միջնակարգ դպրոցի խորհրդի նախագահի 2018թ ապրիլի 11-ի գրությունը և մանկավարժական խորհրդի 23.03.2018թ թիվ 3 նիստի արձանագրության քաղվածքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2018թ. ապրիլի 13
ք. Կապան

ՀՀ Սյունիքի Մարզպետ պ-ին Վ. Հակոբյանին

Տաթև համայնքի« Հարժիսի Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ-ի դպրոցական խորհրդի նախագահ Սեդրակ Հակոբյանից

Մեծարգո մարզպետ, Տաթև համայնքի «Հարժիսի Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդում մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ Աղելա Հովսեփի Հովսեփյանն իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից, ուստի չի կարող հանդիսանալ կառավարման խորհրդի անդամ: Դպրոցի մանկավարժական խորհուրդն առաջադրել է 2014թ.-ից որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի աշխատող Գյուլնազ Արմենակի Թովմասյանի թեկնածությունը: Խնդրում ենք հաստատել կառավարման խորհրդի կազմի փոփոխությունը:

Կից ներկայացնում ենք քաղվածք Հարժիսի Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհրդի 23.03.2018թ. կայացած թիվ 3 նիստի արձանագրությունից:

Դիս նախագահ՝ ..... / Ս. Հակոբյան /

11.04.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՐԺԻՍԻ ՀԱՄԼԵՏ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ՀՀ Սյունիքի մարզ գ. Հարժիս
հեռ./0284/ 6-1-2-34
էլ. փոստ harjis@schools.am

№ 29
«11» ապրիլի 2018թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Սյունիքի մարզի
Հարժիսի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհրդի
23.03.2018թ. կայացած թիվ 3 նիստի
արձանագրությունից՝
Դպրոցական խորհրդի անդամի փոփոխության մասին

Լսեցին.
Տնօրեն Ն. Եսայանի զեկույցը դպրոցի կառավարման խորհրդում մանկավարժական խորհրդի ներկայացուցչի փոփոխության մասին.

«Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդում մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ Աղելա Հովսեփի Հովսեփյանն իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից: Մանկավարժական խորհուրդը պետք է առաջադրի նոր թեկնածու:

Առաջադրվեց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Գյուլնազ Արմենակի Թովմասյանի թեկնածությունը (2014 թվականի հոկտեմբերից ՄԽ-ի անդամ է):

Որոշեցին.

Ըստ փակ գաղտնի քվեարկության արդյունքների՝ 19 կողմ, 0 դեմ, որոշվեց հաստատել Գյուլնազ Արմենակի Թովմասյանի թեկնածությունը:

Դպրոցի տնօրեն՝ ..... / Ն. Եսայան /